ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

23 հունվարի **2018 թվականի N** 05-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 15-Ի N57-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 2016 թվականի ապրիլի 12-ի «Նախարարին կից հասարակական խորհուրդ ստեղծելու մասին» N 43-Ա հաստատված հավելվածի 4-րդ և 7-րդ կետերը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 2016 թվականի հունիսի 15-ի «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարին կից հասարակական խորհրդի կազմը հաստատելու մասին» N57-Ա հրամանի 1-ին կետը լրացնել.

Աշոտ Միրզոյան	«Սպառողների աջակցման կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ
Մարգարիտա Կորխմազյան	«Հանուն մարդկային կայուն զարգացման» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ
Ինգա Զարաֆյան	«ԷկոԼուր» տեղեկատվական հասարակական կազմակերպության նախագահ» բառերով:

2.Հրամանի վերանգրում և ամբողջ տեքստում «էերգետիկայի» բառը փոխարինել «էերգետիկ ենթակառուցվածքների» բառերով:

3. Սույն հրամանի հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ՆԱԽԱՐԱՐ **/ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ**